

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն – 23

ԱՇՏԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի ՆԻՍՏԻ

*ՆԱԽԱԳԱՀՈՒՄ ԷՐ՝ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐ ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԸ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒՄ ԷՐ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԱՄՎԵԼ ՍԱՀԱԿՅԱՆԸ*

Ավագանու 27 անդամներից նիստին մասնակցում էին՝ Թ. Շահվերդյանը, Շ. Վահանյանը, Ա. Մարկոսյանը, Ա. Բաղդասարյանը, Գ. Արշակյանը, Տ. Հակոբյանը, Ռ. Տոնոյանը, Տ. Գալստյանը, Ժ. Ավետիսյանը, Բ. Հարությունյանը, Ն. Արսենյանը, Մ. Մկրտչյանը, Ս. Բադալյանը, Գ. Սուքիասյանը, Ա. Զաքարյանը, Ս. Օվոյանը, Կ. Առաքելյանը, Կ. Շահազիզյանը, Ա. Շմավոնյանը, Գ. Հովհաննիսյանը:

Նիստին մասնակցում էին նաև համայնքի ղեկավարի տեղակալներ Ա. Ներսիսյանն ու Վ. Սաֆարյանը, բաժինների պետեր:

Մինչ օրակարգի հաստատումը համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը, հաշվի առնելով հարցի հրատապությունը և համայնքի համար կարևորությունը, առաջարկեց օրակարգի 9-րդ հարցը հաստատել նոր խմբագրությամբ:

1. Հաստատվում է նիստի հետևյալ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ը

2. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին:

/Ջեկուցող՝ Շ. Վահանյան/

3. Հարկային արտոնություն տալու մասին:

/Ջեկուցող՝ Շ. Վահանյան/

4. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին:

/Ջեկուցող՝ Ի. Բարսեղյան/

5. Աշտարակ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին:

/Ջեկուցող՝ Ի. Բարսեղյան/

6. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/
7. ՀՀ Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի Փարպի գյուղի Ղ. Փարպեցու փողոց 23 հասցեում գտնվող անշարժ գույքը ձեռք բերելու /գնելու/ առաջարկության մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/
8. Շարժական գույքը նվեր ընդունելու առաջարկության մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/
9. Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Թումասյան/
10. Հայաստանի Հանրապետության և Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին:
/Զեկուցող՝ Ս. Թումասյան/
11. Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Թումասյան/
12. ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Անտառուտ և Արագածոտն բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Թումասյան/
13. Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Թումասյան/
14. Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը սահմանելու մասին:
/Զեկուցող՝ Ս. Սահակյան/

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Մ. Մկրտչյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 2 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի 2022 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շ. Վահանյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, 38 հոդվածի առաջին մասի պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքի 2022 թվականի բյուջեի տարեկան եկամուտների և ծախսերի կատարողականը: Շ. Վահանյանը հայտնեց, որ նախատեսված սեփական եկամուտների հավաքագրումը կատարվել է 104 տոկոս:

Համայնքի ղեկավար Թովմաս Շահվերդյանը շնորհակալություն հայտնեց համայնքի բնակչությանը նման ցուցանիշ ապահովելու նպատակով:

19 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Մ. Մկրտչյանը չի մասնակցել քվեարկությանը:

Լ Ս Ե Ց Ի Ն - 3 - Հարկային արտոնություն տրալու մասին:

Զեկուցումով հանդես եկավ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Շ. Վահանյանը և առաջարկեց, հիմք ընդունելով որոշ հարկատուների դիմումները, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, <<Գույքահարկի մասին>> օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետի, <<Հողի հարկի մասին>> օրենքի 10-րդ հոդվածի, << հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ կետի, 245-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, Աշտարակ համայնքի մի քանի սեփականատերերի տրամադրել գույքահարկի, հողի հարկի, անշարժ գույքի հարկի և փոխադրամիջոցների գույքահարկի գծով արտոնություն՝ համաձայն հավելված 1-ի:

Բարձրացված հարցերին Շանթ Վահանյանի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

20 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ

Լ Ս Ե Ց Ի Ն - 4 - Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և տուրիզմի բաժնի պետ Իշխան Բարսեղյանը և առաջարկեց, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-րդ կետի և 82.1-րդ հոդվածի պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանը՝ համաձայն հավելվածի: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից և տարածվում է 2023 թվականի հունվարի 1-ից հետո ծագած իրավահարաբերությունների վրա:

Զեկուցողը նշեց, որ նշված փաստաթուղթ ունենալն օրենսդրական պահանջ է:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

19-ԿՈՂՄ, 1-ՁԵՌՆՊԱՀ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 5 - Աշտարակ համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով գումար հատկացնելու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և տուրիզմի բաժնի պետ Իշխան Բարսեղյանը և առաջարկեց, հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետը, 11-րդ հոդվածը, 13-րդ հոդվածի 10-րդ մասը, Աշտարակ համայնքի 2023թ.-ի բյուջեում հատկացնել 10 000 000 ՀՀ դրամ գումար՝ 2023թ.-ի ընթացքում մասնակցային բյուջետավորման գործընթաց իրականացնելու նպատակով: Մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման համար սահմանվում են բոլոր ոլորտները և համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերը: Մասնակցային բյուջետավորման գործընթացի ժամանակ առաջարկներ ներկայացնելու իրավասություն ունեն՝ համայնքի բնակիչներ, համայնքի ավագանու անդամներ, ինչպես նաև քաղաքացիական հասարակության կազմակերպություններ և այլ խմբեր:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

20 - ԿՈՂՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 6 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին

Ձեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> օրենքի 33, 34 հոդվածների պահանջներով, Աշտարակ համայնքի ավագանու 24.12.2021թ. N 10-Ա որոշման հավելված 2-ի մեջ կատարել լրացումներ և փոփոխություններ:

20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 7 - ՀՀ Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի Փարպի գյուղի Ղ. Փարպեցու փողոց 23 հասցեում գտնվող անշարժ գույքը ձեռք բերելու /գնելու/ առաջարկության մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, հիմք ընդունելով <<ԱՆՏ ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ-ի կողմից տրված եզրակացությունը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 42-րդ և 79-րդ հոդվածի 4-րդ կետերի պահանջներով, համաձայնություն տալ՝ մարզ Արագածոտն, համայնք Աշտարակ գյուղ Փարպի Ղ. Փարպեցու փողոց 23 հասցեում գտնվող, Հարություն Գաբրիելի Աբրահամյանին պատկանող 0.02242հա մակերեսով /կադաստրային ծածկագիր՝ 02-110-0015-0049/ հողամասը 2 400 000 /երկու միլիոն չորս հարյուր հազար/ ՀՀ դրամով /ներառյալ հարկերը/ գնելու համայնքի ղեկավարի առաջարկությանը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 8 - Շարժական գույքը նվեր ընդունելու առաջարկության մասին

Ձեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց, հիմք ընդունելով Վահե Սուքիասյանի 25.01.2023թ. թիվ 626 դիմումը, ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և 79-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով, համաձայնություն տալ Վահե Սուքիասյանին սեփականության իրավունքով

պատկանող ZIL մակնիշի 05 WW 330 համարանիշի /տիպարը՝ KO-713-01 /ZIL-431410// ջրցան մեքենան Աշտարակ համայնքին նվիրելու առաջարկությանը: Նշված ավտոմեքենայի ձևակերպման ծախսերը կատարել համայնքի բյուջեի հաշվին: Գործընթացն ավարտելուց հետո ավտոմեքենան անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Աշտարակի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկին: Սույն որոշումից բխող հետագա իրավական ակտերի ընդունումը վերապահել Աշտարակ համայնքի ղեկավարին:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՅԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 9 - Հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացիների դիմումները, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 29 կետի, «Կառավարության 18.05.2006թ. N 912-Ն, 29.12.2011թ. N 1918-Ն և N 1920-Ն որոշումների պահանջներով, համաձայնություն տալ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխել:

Զեկուցողը նշեց, որ փոփոխության դեպքում նրանք պարտավոր են վճարելու կադաստրային արժեքների տարբերությունը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՅԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 10 - Հայաստանի Հանրապետության և Աշտարակի համայնքային սեփականություն հանդիսացող որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարելու և վարձակալության իրավունքով /մրցույթ/ տրամադրելու թույլտվություն տալու մասին

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-70 հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման և

<<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի դրույթներով, համայնքային սեփականություն հանդիսացող, բնակավայրերի հողեր նպատակային նշանակության հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել, տրամադրել վարձակալության իրավունքով /մրցույթ/ և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 1-ի, համայնքային սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության որոշ հողամասեր աճուրդ-վաճառքով օտարել, և հաստատել մեկնարկային գին՝ համաձայն հավելված 2-ի:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

20 - ԿՈՐՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 11 - *Գյուղատնտեսական արտադրական շենք-շինությունների կառուցման նպատակով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին*

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք ընդունելով քաղաքացիների՝ արտադրական նշանակության շենք-շինությունների կառուցման հայտերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 15-րդ կետի և <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետի պահանջներով, հավանություն տալ Աշտարակ համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողամասերի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական փոփոխելու վերաբերյալ առաջարկություններին:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

20 - ԿՈՐՄ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն - 12 - *ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակ համայնքի Անտառուր և Արագածոտն բնակավայրերում հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունը հաստատելու մասին*

Զեկուցումով հանդես եկավ Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումասյանը և առաջարկեց, հիմք

ընդունելով ՀՀ վարչապետի 2009թ. դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ Համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 28.12.2022թ. N2/փ-306 դրական եզրակացությունը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2011թ. N 1920-Ն որոշման հաստատված կարգի 17-րդ կետի և «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետի պահանջներով, հաստատել Աշտարակ համայնքի Անտառուտ և Արագածոտն բնակավայրերի վարչական սահմաններում գտնվող, հողամասերի նշանակությունների փոփոխությունները:

20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 13 - Համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին

Հարցը ներկայացրեց Աշտարակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Ս. Թումայանը և առաջարկեց, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66 հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 26.05.2016թ. N550-Ն որոշման, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21 կետի պահանջներով, հիմք ընդունելով քաղաքացու դիմումը, ուղղակի վաճառքով օտարել Աշտարակ համայնքի բնակավայրերում առկա հողատարածքը:

Բարձրացված հարցերին զեկուցողի կողմից տրվեցին սպառիչ պատասխաններ:

20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Լ Ս Ե Ց Ի Ն – 14 - Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը սահմանելու մասին

Օրակարգի վերջին հարցը ներկայացրեց համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Սամվել Սահակյանը և առաջարկեց ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 62-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու չորրորդ նստաշրջանի երկրորդ նիստի օրը և ժամը սահմանել 2023 թվականի մարտի 14-ը, ժամը 17:00-ին: Նիստը կազմակերպել Հայաստանի Հանրապետության Արագածոտն մարզի Աշտարակ համայնքի ավագանու նստավայրում, հասցեն՝ ք. Աշտարակ, Ն. Աշտարակեցու հր. 7:

20 - ԿՈՐԱ ՁԱՅՆԵՐ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄԸ ԿՑՎՈՒՄ Է ՍՈՒՅՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆԸ:

Օրակարգի հարցերը սպառված են:

Ավագանին աշխատանքներն ավարտեց 2023 թվականի փետրվարի 14-ին:

Ա Վ Ա Գ Ա Ն Ի՝

- ԹՈՎՄԱՍ ՇԱՀՎԵՐԴՅԱՆ** _____
- ՇԱՆԹ ՎԱՀԱՆՅԱՆ** _____
- ԱՐՄԵՆ ՄԱՐԿՈՍՅԱՆ** _____
- ԱՐԱ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ** _____
- ԳՈՌ ԱՐՇԱԿՅԱՆ** _____
- ՏԱՐՈՆ ՀԱԿՈԲՅԱՆ** _____
- ՌՈՒԶԱՆՆԱ ՏՈՆՈՅԱՆ** _____
- ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆ** _____
- ԺԱՆՆԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ** _____
- ԲԱՎԱԿԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ** _____
- ՆԱԶԵԼԻ ԱՐՄԵՆՅԱՆ** _____
- ՄԻՇԱ ՄԿՐՏՉՅԱՆ** _____
- ՍՈՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ** _____
- ԳՆԵԼ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ** _____
- ԱԶԱՏ ԶԱՔԱՐՅԱՆ** _____
- ՍԱՐԻԲԵԿ ՕՎՈՅԱՆ** _____
- ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼՅԱՆ** _____
- ԿԱՐԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆ** _____
- ԱՐՄԵՆ ՇՄԱՎՈՆՅԱՆ** _____
- ԳԵՎՈՐԳ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ** _____

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Թ. Շ Ա Հ Վ Ե Ր Դ Յ Ա Ն